ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Ս. թ. մայիսի 11-ին ՀԳԱ մի խումբ ակադեմիկոսներ Խորհրդային Միության պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին ուղարկեցին հետևյալ հեռագիրը.

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ

ԽՍՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Մեծարգո Միխայիլ Սերգեևիչ

Հայաստանի գիտական հասարակայնությունը խիստ անհանգստացած է Անդրկովկասում ստեղծված իրադրությամբ, Լեռնային Ղարաբաղի հարցը ուժային եղանակով լուծելու նոր փորձերով:

Այս կապակցությամբ մեր առանձնահատուկ մտահոգությունն է առաջացնում հայ պատանդների ճակատագիրը և ԼՂԻՄ-ի հայկական գյուղերի բնակչության շարունակվող բռնի տեղահանությունը «կամավոր» վերաբնակեցման պատրվակի տակ:

Գտնում ենք, որ միայն պատանդների անհապաղ ազատումը և ԼՂԻՄ-ի ու Ադրբեջանական ԽՍՀ Նախիջևանի ջրջանի հայկական գյուղերի բռնագաղթեցված բնակչության վերադարձը կբարելավի իրադրությունը մասնատարածքում և էապես կնպաստի հայերի ու ադրբեջանցիների միջև երկխոսությանը. հարցերի խաղաղ կարգավորման համար բնդհանուր լեզու գտնելուն:

Հուսով ենք, որ Դուք կաջակցեք խնդրի բանական լուծմանը:

Հայաստանի ԳԱ պրեզիդենտ,
ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԳԱ Ակադեմիկոսներ՝ *Աթոյան, Աղայան, Առաքելյան, Աֆրիկյան, Բաբայան, Բրուտյան, Գալոյան, Գրիգորյան, Գուրզադյան, Երեմյան, Զարյան, Կասյան, Ղազարյան, Մատինյան, Մարտիրոսյան, Մովսիսյան, Ներսիսյան, Ջահուկյան, Ջրբաշյան, Սարգսյան, Սեդրակյան, Վարդանյան, Ֆանարջյան:*

Թարգմ. առաջինից

* * *

Սկզբ հունիսի 19 և 21-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին ՀԳԱ իսկական և թղթակից անդամներ, ինստիտուտների տնօրեններ։ Ընդհանուր ժողովը նախագահում էր ՀԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Ընդհանուր ժողովը քննարկեց Հայաստանի Հանրապետության անկախության դրծրնթացի, Միութենական պայմանագրի և հանրապետությունում կայանալիք հանրաքվեի հարցերը։

Ներածական խոսքով հանդես եկավ ՀԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Զեկուցումներով հանդես եկան ՀԳԱ ակադեմիկոսներ Մ. Խ. Քոթանյանը, Մ. Գ. Ներսիսյանը, ՀԳԱ թղթակից-անդամ Հ. Ռ. Սիմոնյանը։ Զեկուցումների կապակցությամբ ելույթ ունեցան ՀԳԱ ակադեմիկոսներ Ա. Հ. Գարրիելյանը, Գ. Խ. Սարգսյանը, Է. Բ. Ադայանը, Գ. Ա. Գալոյանը, Է. Մ. Ջրբաշյանը, Ռ. Վ. Աթոյանը, Բ. Ն. Առաքելյանը, Գ. Բ. Ղարիբջանյանը, Դ. Մ. Սեդրակյանը, Մ. Մ. Ջրբաշյանը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը, Ռ. Վ. Համբարձումյանը, Գ. Ս. Խանջյանը, ՀԳԱ թղթակից-անդամներ Լ. Ա. Խուրշուդյանը, Հ. Մ. Թամրազյանը, Լ. Հ. Հախվերդյանը, Վ. Ե. Խոջաբեկյանը, Վ. Բ. Բարխուդարյանը, Ռ. Ա. Ղազարյանը, Ա. Ի. Կարապետյանը, Վ. Ս. Նալբանդյանը, Գ. Ի. Տեր-Ստեփանյանը, Ա. Թ. Քուչուկյանը, Գ. Ե. Ավագյանը, Յու. Ալեքսանյանը, Ա. Ա. Թալալյանը, Հ. Ա. Ավետիսյանը, ՀԳԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Լ. Ա. Աղալովյանը, ՀԳԱ «Միտք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Ա. Եղիազարյանը։

ՀԳԱ ընդհանուր ժողովը ընդունեց հայտարարություն (հայտարարության տեքստը կցվում է)։

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը խորին անհանգստություն է հայտնում հանրապետությունում տիրող քաղաքական և տնտեսական վիճակի նկատմամբ, որը չի կարող անտարբեր թողնել հանրապետության որևէ քաղաքացու, առավել ևս մտավորականության, գիտության ասպարեզում աշխատողներին։ Իր անվերապահ համաձայնությունը հայտնելով ՀՀ Գերագույն խորհրդի Անկախության հռչակագրին և առնառարակ անկախության գործընթացին, ՀԳԱ ընդհանուր ժողովը միաժամանակ գտնում է, որ դրա իրականացման հանապարհին թույլ են տրվում առանձին սխալներ։ Այդ սխալների հանդեպ հանդես բերված ֆենոմենատական վերաբերմունքը պետք է դիտել ոչ այլ կերպ, քան դրսից հեռանքներից խուսափելու ձգտման արտահայտություն։

ՀԳԱ ընդհանուր ժողովը գտնում է, որ անկախության հասնելու համար պետք է անցնել երկար ու դժվարին հանապարհ։ Ուստի և պետք է փարատել տնտեսագիտորեն չհիմնավորված և ժողովրդի մեջ տարածված այն միամիտ պատկերացումները, թե Հայաստանը ներկայումս կարող է զարգանալ իր ընդերքի հարստությունները, իր ոչ այնքան մեծաքանակ և միջազգային ստանդարտին չհամապատասխանող արտադրանքը միայն վաճառքի հանելով։ Տասնյակ տարիների ընթացքում Հայաստանի արդյունաբերությունն այնքան խորն է կապվել մյուս հանրապետությունների հետ,

որ մինչև նոր, առավել շահավետ կապերի ստեղծումը, եղած կապերի խզումը կհանգեցնի տնտեսական քայքայման, գործազրկության և արտագաղթի աներևակայելի չափերի: Հայաստանն իր արտադրության մակարդակը պահելու համար տարեկան ներմուծում է շուրջ մեկ միլիոն տոննա մետաղ, վառելանյութը ամբողջությամբ, ավելի քան մեկ միլիոն տոննա հացամթերք, հարյուր հազարավոր տոննաներով կաթնամթերք, ամբողջ փայտանյութը, կաշվի հումքի 80 %-ը և այլն: Հանրապետության արդյունաբերության ապահովվածությունը սեփական հումքային ռեսուրսներով կազմում է ընդամենը 18 %:

Միութենական պայմանագրին / շմիանալու դեպքում այդ ամենը պետք է ձեռք բերվի միջազգային գներով, իսկ դրա համար կպահանջվի տարեկան 5—6 միլիարդ դոլար: Այդպիսի միջոցներ Հայաստանը երկար ժամանակ ունենալ չի կարող: Մինչև միջազգային ստանդարտին համապատասխանող արտադրանքի թողարկումը, որը գործի բարեհաջող ընթացքի դեպքում կարող է պահանջել 15—20 տարի, հանրապետության արտադրանքի իրացման գլխավոր շուկան կմնա Միությունը:

Մինչև տնտեսական նոր կապերի և արտադրության տեխնիկական վերակառուցման հարցերի լուծումը /Միութենական պայմանագրին միանալը դառնում է ոչ թե ցանկության հարց, այլ տնտեսագիտական պարզ հաշիվներով թելադրված կենսական անհրաժեշտություն:

ՀԳԱ ընդհանուր ժողովը գտնում է, որ Հայաստանն այսօր ևս պետք է զարգացնի իր կապերը դեմոկրատական Ռուսաստանի հետ: Դա հայ ժողովրդի պատմական փորձի թելադրանքն է: Միևնույն ժամանակ պետք է ձգտել բարիդրացիական հարաբերություններ հաստատել բոլոր հարևանների հետ: Ամեն մի այլ քաղաքականություն Հայաստանի համար կարող է աղետալի լինել թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ ռազմական առումներով:

Ժողովը հատկապես ընդգծում է Լեռնային Ղարաբաղի ներկա կացության և հեռանկարի հարցը, գտնելով, որ Միության կազմից դուրս գալու առաջարկը փաստորեն Լեռնային Ղարաբաղից հրաժարվելու առաջարկ է:

Ժողովը գտնում է նաև, որ կորուստներով և նորանոր զոհերով անկախություն նվաճելու, «մեռնելով ապրելու» կարգախոսն այսօր արդեն սպառել է իրեն: Անկախության պետք է հասնել քաղաքական ուղիներով, պահպանելով ժողովրդի անվտանգությունը, ժողովրդի հոգևոր և ֆիզիկական ուժերը:

Ելնելով այս ամենից, ՀՀ ԳԱ ընդհանուր ժողովը հայտարարում է.

1. Իր անվերապահ պաշտպանությունը հանրապետության խորհրդարանի ընդունած Անկախության հռչակագրին և անկախության գործընթացին:

2. Այժմ ավելի, քան երբևէ հարկավոր է հասնել տարբեր կուսակցությունների, հասարակական բոլոր ուժերի համագործակցության, որ պետք է հենված լինի հայ ժողովրդի շահերի հիմարիտ ըմբռնման և իրատես քաղաքականության վրա:

3. Հանրապետության պետական և կառավարական մարմինները պետք է մասնակցեն միութենական պայմանագրի մշակման աշխատանքներին և

պաշտպանեն հանրապետության շահերը և ոչ թե անվերապահորեն ստորագրեն ուրիշների կողմից կազմված նախագիծը:

4. Գանել քաղաքականորեն նիշտ և կենսականորեն անհրաժեշտ, որ Հայաստանը իր մասնակցությամբ մշակված պայմաններով, որպես անկախ պետություն մտնի նորոգ Միության կազմի մեջ:

5. Անհրաժեշտ համարել ս/թ սեպտեմբերի 21-ին կայանալիք հանրաքվեի հարցը առաջադրել այլընտրանքի սկզբունքով՝

ա) «Համաձա՞յն եք Հայաստանի անկախությանը Միության կազմից դուրս»

բ) «Համաձա՞յն եք Հայաստանի անկախությանը նորոգ Միության կազմում»:

Ժողովի նախագահ, ՀԳԱ պրեզիդենտ,
ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ